ԻՐԻՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ «ՕՂԱԿ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԸ

Ահաբեկչական «Օղակ» ռազմագործողության սանձազերծման 1991 թ. ապրիլ-մայիս ամիսների ողբերգական օրերին աշխարհի առաջադեմ մտավորականությունը ԽՍՀՄ-ում, Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, սփյուռքահայ բազմաթիվ կառույցներ, հասարակական և կուսակցական կազմակերպություններ բողոքի ձայն բարձրացրեցին՝ իրենց զորակցությունն ու ցավակցությունն արտահայտելով կատարված աննախադեպ պետական հանցագործության առնչությամբ:

Գետաշենի ենթաշրջանում Ադրբեջանի կողմից հայ ազգաբնակչության հանդեպ իրագործված ապօրինությունները գագաթնակետին հասան 1991 թ. գարնանը: Միջազգային մամուլում պարբերաբար և հաճախակի տպագրվում էր տեղեկատվություն տարածաշրջանում խաղաղ հայ բնակչության հանդեպ Ադրբեջանի օմօնականների թույլ տված հանցագործությունների վերաբերյալ, հնչում էին դատապարտման և անօրինականությունները դադարեցնելու կոչեր: Տարածաշրջան այցելած օտարերկրյա լրագրողները, դիտորդներն ու փորձագետներն (ի տարբերություն խորհրդային պաշտոնական լրատվության, որը կեղծ, ստահոդ, ապակողմնորոշող, կողմնակալ լուրեր էր հրապարակում) անաչառ տեղեկատվություն էին մատուցում և միջազգային հանրությանը ներկայացնում ճշմարտությունը՝ նոր թափ ստացող հայ-ադրբեջանական զինված հակամարտության մասին:

1991 թ. մայիսի 1-ին հայտարարությամբ հանդես եկավ ՀՅՊ բյուրոն՝ դատապարտելով Գետաշենի և Մարտունաշենի, ինչպես նաև հայկական մյուս շրջանների խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի և միութենական իշխանությունների համատեղ ագրեսիան: Նույն մայիսի 1-ին Ադրբեջանի և կենտրոնի ոճրագործության դեմ ԽՍՀՄ-ում առաջինը բողոքի ձայն բարձրացրեց Ռուսաստանի սահմանադրական ժողովրդավարների (կադետներ) կուսակցությունը: Բողոքի և դատապարտող հայտարարություններով հանդես եկան Կիպրոսի ԷՏԵՆ սոցիալիստական երիտասարդական միությունը, ՏԻՍԻ, ՏԻՔՕ, ԷՏԷՔ կուսակցությունները: Կիպրոսի պետական հեռուստատեսությունը՝ մայիսի 7-ին և 8-ին, «Աստրա» ռադիոկայանը՝ մայիսի 9-ին, լուսաբանեցին կատարվածը, դատապարտեցին՝ անվանելով հանցագործություն: Ամերիկայի Հայոց Առաջնորդարանը, Ամերիկայի հայկական համագումարի խնամակալների խորհուրդը, Ռամկավար Ազատական Կուսակցության Կենտրոնական վարչությունը կատարվող անօրինականությունների մասին նամակներ հղեցին ԱՄՆ պետքարտուղարությանը, նախագահ Ջորջ Բուշին, ԱՄՆ կոնգրեսի անդամներին: Կանադայի նոր ժողովրդավար կուսակցության անդամ, պատգամավոր Սվենդ Ռոբինսոնը դիմեց Կանադայի արտաքին գործերի նախարարին և Կանադայում ԽՍՀՄ դեսպանին՝ պահանջելով իր կուսակցության և կանադացիների մտահոգությունը հայտնել խորհրդային իշխանություններին: Կանադացի մեկ ուրիշ պատգամավոր՝ Անդրե Պուլերիսը, նամակ հղեց ԽՍՀՄ հյուպատոսին՝ խորհրդային իշխանություններից պահանջելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ «կասեցնելու հայերի նոր ցեղասպանությունը, որը դառնորեն շարունակվում է 1915-ից ի վեր»[1]:

---

[1] Տե՛ս «Ազատամարտ» (բացառիկ), 3 մայիսի 1991 թ., «Հայաստանի Հանրապետություն», 2, 3, 4, 8 մայիսի 1991 թ., «Ազդակ», 27 մայիսի 1991 թ.:

Գետաշենում տեղի ունեցած դեպքերին լայնորեն անդրադարձան ամերիկյան և բրիտանական հեռուստատեսությունն ու մամուլը: Ամերիկյան «Ասոշիեյթեդ պրես», «Յունայտեդ պրես ինտերնեշնլ» գործակալությունները և «էն Բի Սի» հեռուստաընկերությունը, բրիտանական «Ռոյթըր» և «Բի Բի Սի» գործակալությունները ռուսերեն և անգլերեն լեզուներով կանոնավոր և օպերատիվ տեղեկատվություն էին հաղորդում Արցախում, Շահումյանում և Գետաշենի ենթաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ապրիլի 30-ին «Սի էն էն» հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվեց կես ժամանոց հատուկ թողարկում գետաշենյան դեպքերի մասին[2]:

Հատկապես ակտիվ էր ամերիկյան մամուլը: «Վաշինգտոն թայմս»-ում տպագրված «Հայաստան-Ադրբեջան. նոր ընդհարումներ», Վաշինգտոն պոստ»-ի՝ «Հայ-ադրբեջանական ընդհարում. կա առնվազն 25 զոհ», «Լոս Անջելես թայմս»-ի՝ «Ազգամիջյան պայքար. ուղղակի պատրվակ խորհրդային ջախջախիչ բռունցքի համար» հոդվածներում անկողմնակալ լուսաբանվում էր Արցախում և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների իրադարձությունները: Հոդվածներում այն միտքն էր զարգացվում, թե անկախության ուղի բռնելու համար ՀՀ-ն ու հայ բնակչությունը պատժվեց Խորհրդային Միության իշխանությունների կողմից, որոնք արտակարգ միջոցներ են ձեռնարկել՝ փրկելու համար մասնատվող միությունը: Նշվում էր, որ «տանկերով ու զրահամեքենաներով զինված» ադրբեջանական հատուկ ստորաբաժանումներին օժանդակել են ԽՍՀՄ ներքգործնախարարության զորամիա-

---

[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2, 4 մայիսի 1991 թ.:

վորումները: Կենտրոնական իշխանությունները մեղադրվում էին «պետական ահաբեկչություն թույլ տալու համար»[3]:

«Ազատություն» ռադիոկայանով 1991 թ. ապրիլ-մայիսյան արյունալի իրադարձությունների շուրջ պարզաբանումներով հանդես եկան Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Դմիտրի Վոլչեկը, Լեոնիդ Գոզմանը և ակադեմիկոս Անդրեյ Սախարովի զինակից Լեոնիդ Բատկինը: Հաղորդումներ հեռարձակեցին նաև «Էխո Մոսկվի» ռադիոկայանը և «Բալթ-ֆաքս» գործակալությունը: Մայիսի 2-ին Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցչության դահլիճում տեղի ունեցավ «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության մոսկովյան բաժանմունքի նիստը, որին ներկա էին Մոսկվայի հայ հասարակայնության ներկայացուցիչները: ՌՍԴԽՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Ալեքսանդր Շաբադը հրապարակեց «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման կոորդինացիոն խորհրդի հայտարարությունը: «Մեմորիալի» անդամները կարծիք հայտնեցին, որ կենտրոնը հետևողականորեն իրականացնում է հայերի ցեղասպանության և տեղահանության քաղաքականություն ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում[4]:

Խորհրդային ժողովրդավար թերթերն ու ամսագրերը պարբերաբար վերլուծական հոդվածներ էին հրապարակում «Օղակ» գործողության ընթացքի վերաբերյալ: «Նեզավիսեմայա գազետա» թերթն այն հատուկ մշակված «պետական ահաբեկչություն» էր որակում: Թերթում տպագրված է «Օղակ» ռազմագործողության կոդավորված պլան-փաստաթուղթը[5]:

---

[3] "Washigton Times", 1 May 1991, "The Washigton Post", 2 May 1991, "Los Angeles Times", 10 May, 1991.

[4] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 մայիսի 1991 թ., "Голос Армении" ("Коммунист"), 7 мая 1991 г.

[5] Տե՛ս "Независимая газета", 5, 7 мая 1991 г.

Այն կարևորագույն փաստ է և ցույց է տալիս ռազմագործողության պետական ահաբեկչական բնույթը:

«Օղակ» ռազմագործողության ընթացքում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլումն են գտել միջազգային մի շարք կազմակերպությունների փաստաթղթերում, դարձել լսումների թեմա՝ ՌԴ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեում, գնահատվել Եվրախորհրդարանի և ԱՄՆ սենատի բանաձևերում: ԱՄՆ կոնգրեսում դեմոկրատների ղեկավար Դեյվիդ Բոնիորը (Միչիգան) Ներկայացուցիչների պալատին ուղղված հայտարարության մեջ խորը ընդվզում էր արտահայտում ադրբեջանական և խորհրդային ներքին գործերի նախարարության ուժերի կողմից հայկական Գետաշեն-Մարտունաշենի ենթաշրջան ներխուժման դեմ: Շեշտելով, որ սպանվածների մեծ մասը կանայք, ծերեր և երեխաներ են, նա իր պաշտոնակից կոնգրեսականներից պահանջեց «իրենց ձայնը բարձրացնել հայ ժողովրդին ուղղված այս ահռելի բռնությունների դեմ»՝ Մոսկվային կոչ անելով պաշտպանել հայկական գյուղերը[6]: Իսկ կոնգրեսականներ Դեյվիդ Դրեյերը և Մերվին Դիմալլին Ներկայացուցիչների պալատի անդամներին հղած նամակում խստորեն քննադատում էին խորհրդային զորքերի կողմից Գետաշենի և Մարտունաշենի գրավումը: Նրանք Կոնգրեսին առաջարկեցին որոշում ընդունել, որով խորհրդային ժողովուրդներին տրամադրվելիք օժանդակությունները կկատարվեն հանրապետական կառավարությունների մակարդակով, քանի դեռ խորհրդային զորքերը բռնարարքներ են գործում անկախության համար պայքարող հանրապետությունների դեմ: Գետաշեն-Մարտունաշենյան ոճրագործությունը դատապարտող հայտարարությամբ հանդես եկան նաև կոնգրեսականներ

---

[6] Տես «Ազատամարտ» (բացառիկ), 3 մայիսի 1991 թ.:

Ֆրենկ Անունիզիոն, Թոմ Դիլեյը, Ռիչարդ Լեհմանը, Ֆրանկ Փալլոուն, Դանա Ռոհռաբաշերը[7]:

Մայիսի 21–25-ը Մոսկվայում իր աշխատանքը սկսեց հայտնի գիտնական, իրավապաշտպան Անդրեյ Սախարովի հիշատակին նվիրված առաջին միջազգային կոնգրեսը՝ «Խաղաղություն, առաջադիմություն, մարդու իրավունքներ» խորագրով[8]: Կոնգրեսին մասնակցում էին քաղաքական գործիչներ և իրավապաշտպաններ աշխարհի տարբեր ծայրերից՝ Ալեքսանդր Դուբչեկը, Ջորջ Սորոսը, բարոնուհի Քերոլայն Քոքսը, Անջեյ Ռոմաշևսկին, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Մարիո Սոարեշը և ուրիշներ:

Միջազգային կոնգրեսի պատվիրակությունն առաջին միջազգային փորձագիտական խումբն էր, որին թույլատրվեց այցելել ԼՂԻՄ: Բարոնուհի Քերոլայն Քոքսի ղեկավարությամբ 1991 թ. մայիսի 25-29-ին պատվիրակությունը առաջին այցելությունը կատարեց հայ-ադրբեջանական հակամարտության գոտի: Մայիսի 30-ին պատվիրակության հինգ անդամներից կազմված խումբը ժամանեց Բաքու: Մայիսի 31-ին նրանք հանդիպեցին պրեզիդենտ Ա. Մութալիբովին, սակայն նրանց պահանջը՝ այցելել Լեռնային Ղարաբաղի Շուշիի, Հադրութի, Շահումյանի շրջաններ, Ստեփանակերտ, Խոջալու, մերժվեց ադրբեջանական իշխանությունների կողմից[9]: Կոնգրեսի պատվիրակությունը երկրորդ անգամ ԼՂԻՄ այցելեց հուլիսի 13–16-ը: Մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց զրուցելու ադրբեջանական բանտերում պահվող հայ պատանդնե-

---

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] "Правда", 21 мая 1991 г.

[9] Caroline Cox and John Eibner: Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh: Institut for Religious Minorities in the Islamic World: Zurich, London, Washington, 1993. http://www.sumgait.info/caroline-cox/ethnic-cleansing-in-progress/operation-ring.htm

րի հետ, այցելելու այն գյուղերը, որոնց բնակչությունը բռնագաղթվել էր: Հուլիսի 17-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ք. Քոքսի գլխավորած պատվիրակության մի խումբ արտերկրյա փորձագետների մամուլի ասուլիսը՝ Հայաստան և Ադրբեջան կատարած նրանց երկրորդ ուղևորության արդյունքների շուրջ: Պատվիրակությունը հանդես եկավ «Օղակ» ռազմական գործողության վերաբերյալ զեկույցով՝ դատապարտելով բռնի տեղահանության, անհիմն ձերբակալությունների, քաղաքացիական բնակչության նկատմամբ դաժան վերաբերմունքի փաստերը[10]:

Աշխարհի տարբեր երկրներում սփռված հայությունն «Օղակ» ռազմական գործողության վերաբերյալ իր վերաբերմունքն արտահայտեց բողոքի զանգվածային ցույցերով և հավաքներով: Մայիսի 3-ին՝ Բեյրութում, իսկ մայիսի 4-ին՝ Վաշինգտոնում խորհրդային դեսպանատների առջև հարյուրավոր հայեր ցույցի դուրս եկան՝ իրենց բողոքն արտահայտելով Գետաշեն-Մարտունաշենում կազմակերպված բռնությունների դեմ: Սիդնեյում խորհրդային հյուպատոսարանի առջև բողոքի ցույց կազմակերպեց Ռամկավար ազատական կուսակցության «Արտակ Դարբինյան» ակումբը: Մայիսի 6-ին Ուրուգվայի հայ համայնքի բոլոր կազմակերպությունները միասնաբար խաղաղ ցույց կազմակերպեցին Մոնտեվիդեոյի խորհրդային դեսպանատան առջև: Մայիսի 11-ին Նյու Յորքի շրջանի հայկական բոլոր կազմակերպությունների և զույգ առաջնորդարանների մասնակցությամբ ժողովրդական բողոքի մեծ հավաք տեղի ունեցավ ՄԱԿ-ում խորհրդային ներկայացուցչության առջև: Բոլոր բանախոսները դատապարտեցին խորհրդային բանակի զորամիավորումների հարձակումներն Ադրբեջանի հայկական և Հայաստանի սահմանամերձ գյուղերի վրա և պահանջեցին

---

[10] Տես «Հայաստանի Հանրապետություն», 25 հուլիսի 1991 թ.:

անհապաղ զորքերը հեռացնել այդ շրջաններից: Ամերիկյան հեռուստատեսությունն անդրադարձավ այդ բազմամարդ հավաքին[11]: Մ. Գորբաչովին բողոքի միասնական նամակ հղեցին նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն ու Եվրոպայի Եկեղեցիների համագումարը[12]:

Ռուս գրող Ինեսսա Բուրկովան ապրիլի 16-ից մինչև մայիսի 15-ը գտնվում էր Շահումյանում և կարողացավ ընդամենը 35 կմ մոտենալ Գետաշենին: Մայիսի 2-ից սկսած նա ականատեսներից ու տուժածներից վկայություններ էր հավաքում և այդ տեղեկությունները հեռախոսով հաղորդում Մոսկվա՝ «Կրիկ» կազմակերպության անդամներին, վերջիններն էլ՝ «Մեմորիալին», ԽՍՀՄ և ՌՍԴԽՀ ժողպատգամավորներին, անկախ ՁԼՄ-ներին, «Ազատություն», «Էխո Մոսկվի» ռադիոկայաններին[13], որոնք օպերատիվ և հանգամանալի լուսաբանում էին գետաշենյան իրադարձությունները:

«Օղակ» ռազմական գործողության ծավալման օրերին ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում, Լենինգրադում (Սանկտ-Պետերբուրգ) և այլ քաղաքներում տարբեր ազգությունների պատկանող ժողովրդավարական ուժերի հասարակական և քաղաքական համախմբում տեղի ունեցավ ի պաշտպանություն հայության արդար պահանջների: Ցուցարարները դուրս եկան Կարմիր հրապարակ՝ «Դադարեցնել Գետաշեն գյուղի բնակիչների բռնագաղթը» և «Ողբում ենք մարդասպանների հոգիների համար» ցուցապաստառներով[14]: «Օղակ» ռազմա-

---

[11] Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 10 մայիսի 1991 թ., «Երեկոյան Երևան», 15 մայիսի 1991 թ.:

[12] Տե՛ս «Ազդակ» 27 մայիսի 1991 թ.:

[13] http://sumgait.info/ring/seda-vermisheva/karabakh-deportation-6.htm (Инесса Буркова, писательское объединение "Апрель", Я свидетельствую ..., Из сообщений переданных Инессой Бурковой из Шаумяновска, 30 апреля 1991).

[14] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 մայիսի 1991 թ.:

գործողության ընթացքում՝ 1991 թ. ապրիլի վերջից մինչև հունիսի սկիզբը, մոսկովյան «Մեմորիալ» իրավապաշտպան միության կենտրոնն արձանագրել է մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների բազմաթիվ դեպքեր: Միության հայտարարություններից մեկում մասնավորապես նշվում էր. «Կոպտորեն խախտվել է յուրաքանչյուր մարդու կյանքի, ազատության, անձնական անձեռնմխելիության իրավունքը, կիրառվել են կտտանքներ, կատարվել՝ ինքնակամ կալանքներ և ձերբակալություններ, կատարվել են բազմաթիվ գույքային իրավախախտումներ: Բնակչության տեղահանումը կրել է զանգվածային բնույթ: Այդ խախտումներին հատուկ ցինիկություն է հաղորդում այն փաստը, որ խաղաղ բնակչության նկատմամբ զանգվածային բռնությունը կատարվել է հենց իրավապահ մարմինների կողմից»[15]: Մայիսի 12-ին «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման համակարգող խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որում տեղի ունեցածը բնութագրեց որպես ցեղասպանական ակտ: Բողոքի և կենտրոնական իշխանություններին ուղղված ողջախոհության կոչով հանդես եկավ նաև «ԼՂԻՄ-ի հայ բնակչության իրավունքների պաշտպանության ընկերակցությունը»՝ դիմելով երկրի բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգամավորներին, ամբողջ հասարակայնությանը: Դիմումի տակ ստորագրել էին տարբեր ազգությունների տաս հազար ներկայացուցիչներ[16]:

Մայիսի 7-ին ժողովրդական պատգամավորների Լենինգրադի քաղաքային ու մարզային խորհուրդների նախագահությունների համատեղ նիստում հայտարարություն ընդունվեց՝ ի

---

[15] http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Getashen/index.htm (Доклад Правозащитного центра общества «Мемориал»: Нарушение прав человека в ряде районов Азербайджанской Республики в период с конца апреля по начало июня 1991 г.).

[16] «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի, 1991 թ.:

պաշտպանություն ԽՍՀՄ ժողպատգամավորների արտահերթ համագումար հրավիրելու ՀՀ Գերագույն խորհրդի պահանջի: Լենինգրադի խորհրդի 8-րդ նստաշրջանում ընդունվեց ՌՍԴԽՀ ժողովրդական պատգամավորների համագումարին ուղղված դիմում, որով վճռականորեն դատապարտվեց քաղաքական հակամարտությունների լուծման նպատակով բանակի օգտագործումը: Մայիսի 18-ին Լենինգրադի Նևսկի պողոտայում պիկետ կարգվեց, որի կազմակերպիչներն էին քաղաքի մի շարք հասարակական կազմակերպություններ և հայ համայնքը: Կազմակերպվեց ստորագրահավաք ի պաշտպանություն Հայաստանի Գերագույն խորհրդի պահանջների[17]:

Մայիսի 16-ին Լատվիայի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց հայտարարություն, որով Գետաշեն-Մարտունաշենում, Ոսկեպարում կատարվածը բնութագրեց որպես ցեղասպանություն: Լատվիայի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Դայնիս Իվանսը հայտարարեց. «ԽՍՀՄ-ի վարած քաղաքականության էությունն է. չլինի Ղարաբաղը, չի լինի և Ղարաբաղի հիմնահարցը»[18]: Մայիսի 17-ին ԱՄՆ սենատը միաձայն որոշում ընդունեց՝ դատապարտելով Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի հայ բնակչության դեմ ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի իշխանությունների սանձազերծած հանցագործությունները: Որոշման մեջ դատապարտվում էին Լեռնային Ղարաբաղում և հարակից հայկական բնակավայրերում անմեղ մարդկանց, կանանց և երեխաների վրա կատարված հարձակումները, ռազմական ուժի լայնածավալ կիրառումը, ինչպես նաև ՀՀ արևելյան և հարավային սահմաններին անզեն բնակչության գնդակոծումները և կոչ էր արվում վերջ տալ շրջափակմանը,

---

[17] Տե՛ս նույն տեղում, 8, 21 մայիսի 1991 թ.:

[18] "BNS-Baltic News Service", 16 May 1991.

ուժի գործադրման մյուս ձևերին, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂԻՄ-ի դեմ ուղղված ահաբեկչությանը[19]: Արցախում խորհրդային զինված ուժերի և Ադրբեջանի ղեկավարության սանձազերծած ցեղասպանությունը դատապարտող բաց նամակով ԱՄՆ-ի պրեզիդենտին դիմեց հայտնի իրավաբան, մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Բոգորազը: Խորհրդային բանակի գործողությունները դատապարտող հայտարարություններով և նամակներով հանդես եկան նաև Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը, Մարսելի քաղաքապետը, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոլան Դյուման և ուրիշներ:

1992 թ. փետրվարին ԵԱՀԽ միջնորդական առաքելության փաստահավաք խմբի տարածաշրջան առաջին այցելությունից հետո՝ փետրվարի 28-ին, միջնորդական առաքելության հրապարակած զեկույցում մասնավորապես նշվում էր. «1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին իրավիճակը հատկապես սրվեց, երբ խորհրդային բանակը Ադր. ՆԳՆ ստորաբաժանումների օգնությամբ տարածաշրջանի շատ գյուղերից տեղահանեց հայերին: Տեղահանությունն իրականացվեց առանձնահատուկ դաժանությամբ»[20]:

Ինչպես տեսնում ենք, «Օղակ» ռազմական գործողության օրերին միջազգային լրատվամիջոցները լուսաբանել և իրենց արդարացի գնահատականն են տվել այդ ողբերգական իրադարձություններին: Այն արժանացել է նաև առաջադեմ գործիչների դատապարտմանը:

---

[19] Տե՛ս http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c102:S.RES.128. «Հայաստանի Հանրապետություն», 24 մայիսի 1991 թ.:

[20] Committee of Senior Officials-CSO, Journal No. 2, Annex 1, Seventh Committee on Senior Officials meeting, Prague, 27-28 February 1992. http://www.nkr.am/en/statements/116/

ИРИНА БАРСЕГЯН

ОТЗЫВЫ МЕЖДУНАРОДНОГО СООБЩЕСТВА И ПРЕССЫ О ВОЕННОЙ ОПЕРАЦИИ "КОЛЬЦО"

РЕЗЮМЕ

В конце апреля – начале мая 1991 года специальные отряды милиции (ОМОН) Министерства внутренних дел Советского Азербайджана, при поддержке войск МВД СССР, начали крупномасштабную карательную операцию "Кольцо". Суть операции заключалась в изгнании армянского населения из Шаумяновского района и Нагорно-Карабахской Автономной Области.

События, происходившие в ходе операции "Кольцо" нашли отражение в документах международных организаций, стали предметом слушаний в Комитете по правам человека Верховного Совета Российской Федерации и получили оценку в резолюциях Европарламента и Сената США.

Тем не менее, совершенные в ходе операции "Кольцо" преступления не получили должной политической и правовой оценки международного сообщества, а организаторы и исполнители не понесли должного наказания. Это в дальнейшем стало прецедентом для новых военных преступлений Азербайджана против мирного армянского населения, что в конечном итоге привело к полномасштабной войне.

IRINA BARSEGHYAN

INTERNATIONAL COMMUNITY AND MEDIA RESPONSES ON THE "RING" MILITARY OPERATION

SUMMARY

In late April - early May 1991, special police detachments (OMON) of the Ministry of Internal Affairs of Azerbaijan, with the support of the USSR Interior Ministry's troops, launched a large-scale punitive operation of *Ring*, the essence of which was to exile the Armenian population of the Nagorno-Karabakh Autonomous Oblast, the Shahumian region, and some regions of Northern Artsakh.

The events, which took place during the operation of *Ring*, were reflected in the documents of some international organizations, became a subject of hearings at the Human Rights Committee of the Supreme Soviet of the Russian Federation and got the corresponding assessment in the resolutions of the European Parliament and the U.S. Senate.

However, the crimes committed during the operation of *Ring* haven't got the proper political and legal assessment by the international community and their organizers and executors are still unpunished. This became a precedent for new military crimes and inhumane actions by Azerbaijan against the peaceful Armenian population, which turned into a full scale war.